**Արձանագրություն N 4**

**ԱՔ-ԳՀԾՁԲ-22/15 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Արմավիր

12 հուլիսի 2022թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Աբգարյան
Հանձնաժողովի
Գնահատող անդամներ՝ Մ. Մանուկյան, Ա. Գրիգորյան
Բացող անդամներ՝ Ս. Առաքելյան, Ս. Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Համբարյան

**1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>**
**(Ա. Աբգարյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բանակցությունների կազմակերպման մասին,
3. Գնահատման մասին,
4. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
5. Ներկայացված հիմնավորումների մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

**2. <u>Բանակցությունների կազմակերպման մասին</u>**
**(Ա. Աբգարյան)**

**Քանի որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ. պարբերության համաձայն հաղթողին որոշելու նպատակով կասեցնել նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. հուլիսի 12-ին ժամը 15:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 30 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցություններին մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ ներկայացվել են:

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գին |
| 1 | **ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ. Գորկի փողոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն** | | | | **4054584** |
| | «ԱՍՏԻԾԱՆ» ՍՊԸ | 1000000 | | 1000000 | |
| | «Սուար» ՍՊԸ | 1130000 | | 1130000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | 1410000 | | 1410000 | |
| | ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 2000000 | 400000 | 2400000 | |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 3.Գնահատման մասին

**(Ա. Աբգարյան)**

Մասնակիցների կողմից հրավերի 2.4.1. կետով սահմանված կարգով ներկայացվել են պահանջվող չափանիշներին համապատասխան բոլոր փաստաթղթերը:

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| | ***Ընտրված մասնակից ճանաչել՝*** | |
| 1 | «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ | 1 |
| | ***երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել*** | |
| 1 | «Սռւար» ՍՊԸ | 1 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

## 4.Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

**(Ա. Աբգարյան)**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 5.Ներկայացված հիմնավորումների մասին

**(Ա. Աբգարյան)**

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ **հիմնավորումներ չեն ներկայացվել:**

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Աբգարյան

անդամներ՝ Մ. Մանուկյան

Ա. Գրիգորյան

Ս. Առաքելյան

Ս. Հարությունյան

Քարտուղար՝ Մ. Համբարյան